Ս. Սարյան «Գեղարվեստագիր» կտավը, 1964թ.

Մայիս 2012

ազատություն
արդարություն
դաշնակցություն

ՄԵՆՔ ՔՈ ԸՆԿԵՐՆ ԵՆՔ

ՀՀ Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ի ընտրություններ

Հայ Յեղափոխական Դաշնակցության

նախընտրական ԾՐԱԳԻՐ

դաշնակցություն արդարություն ազատություն

Մայիս

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը՝

իբրև ազգային, ժողովրդավար, սոցիալիստական և հեղափոխական կուսակցություն, մշտապես պայքարել է հայ մարդու և հայության քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային շահերի համար:

ՀՅ Դաշնակցության համար Հայաստանի անկախությունն ու ինքնիշխանությունը բացարձակ արժեք են: Բարձրագույն արժեք են մարդը, նրա արժանապատվությունն ու իրավունքները: Հարկ է, որ Հայաստանի քաղաքացին հավատա իր պետության, իր և իր ընտանիքի վաղվա օրվան, մասնակից դառնա այդ ապագայի կերտմանը: Անհրաժեշտ է թռիչքաձև, կայուն զարգացման նախադրյալներ ստեղծել, թարմ շունչ հաղորդել հասարակական կյանքի բոլոր ոլորտներին:

ՀՅԴ նախընտրական ծրագիրը կառուցված է հետևողականության, բարոյականության ու արդարության չափանիշներով: Այն ուղղված է ապագային, իսկ մեր հայացքը՝ երիտասարդներին:

Մեր նպատակն է հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում համակարգային փոփոխություններ իրականացնել և, առողջ ուժերի աջակցությամբ, կառուցել Ազատ քաղաքացիների Արդար երկիր:

Անկախության ձեռք բերումից հետո ձևավորված հասարակական, քաղաքական, տնտեսական իրողություններն այլևս ի զորու չեն ապահովել անհրաժեշտ առաջընթաց:

Ազատական գաղափարախոսության սխալ ընկալումը, դրա ծայրահեղ գործադրումը, սոցիալական պետության հիմնադրույթի անտեսումը, ազատ շուկայի կարգավորման գործում պետության դերի թերագնահատումը հանգեցրել են տնտեսական ներկա կարգին, երբ պետությունը կառավարում են ֆինանսատնտեսական մենաշնորհները:

Վատնելով զգալի միջոցներ և գործադրելով տնօրինած վարչական հսկայական պաշարը՝ օլիգարխիան պարբերաբար վերարտադրում է ինքն իրեն՝ արգելակելով քաղաքական համակարգի կայացումը, ազդելով հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների վրա: Այսօր հրամայական պահանջ է մեկտեղել բոլորիս ուժերը և մեր նախնիների երազանքին, մեզ ու մեր զավակներին արժանի պետություն կերտել:

Առ այդ, մեկնելով Հայաստանի և հայության առջև ծառացած արտաքին ու ներքին մարտահրավերներն ու սպառնալիքները հաղթահարելու անհրաժեշտությունից, Հայ Յեղափոխական Դաշնակցության 2012-2017 թվականների հիմնական նպատակներն են՝ շեշտակի կրճատել աղքատությունը և վերացնել չքավորությունը (յուրաքանչյուր քաղաքացու համար երաշխավորել կենսապահովման նվազագույն բյուջեից ոչ ցածր եկամուտ), կազմավորել միջին խավ, ապահովել արժանավայել կյանքի պայմաններ, ձևավորել կայուն զարգացող, մրցունակ տնտեսություն, կառուցել ազգային-ժողովրդավարական ժամանակակից պետություն և հաստատել ներկա մարտահրավերներին համարժեք ազգային-պետական ուղեգիծ:

Սոցիալ-տնտեսական քաղաքականության ուղղություններն ու թիրախները

1 2012-2017 թվականների սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրներն են՝ զբաղվածության ապահովումը, տնտեսության մրցունակության բարձրացումը, արտահանման խրախուսումը, արժանապատիվ վարձատրության համակարգի ներդրումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և աղքատության հաղթահարումը:

2 Սոցիալ-տնտեսական քաղաքականության ամբողջական գործադրմամբ ՀՆԱ-ն կկրկնապատկվի, պետական բյուջեն՝ կեռապատկվի, կստեղծվի առնվազն 200 հազար նոր աշխատատեղ:

Արտահանման խթանում

3 Կառավարության, համաշխարհային հայտնի ընկերությունների, Սփյուռքի խոշոր գործարարների հետ ուղղակի բանակցությունների միջոցով Հայաստանում կհիմնվեն արտահանման ուղղվածությամբ հզոր արտադրական ձեռնարկություններ: Նման ընկերություններից յուրաքանչյուրի համար Ազգային ժողովի կողմից կընդունվեն հատուկ օրենքներ՝ պայմանների, պետական աջակցության, արտոնությունների և փոխադարձ պարտավորությունների վերաբերյալ:

4 Հայկական ապրանքների արտահանումը խրախուսելու նպատակով կներդրվի արտահանման վարկերի համակարգ՝ տարեկան հինգ տոկոս տոկոսադրույքով՝ հիմնվելով արտահանման մասին պայմանագրի և հաշիվ-ապրանքագրի վրա:

5 Ապրանքների ներմուծումը Հայաստան կպայմանավորվի այդ երկրների կողմից Հայաստանից ապրանքների և ծառայությունների արտահանմամբ:

6 Յուրաքանչյուր դիվանագիտական ներկայացուցչության աշխատանքի գնահատման կարևորագույն չափորոշիչ կսահմանվի պատասխանատու տարածաշրջանում կամ երկրում Հայաստանից արտահանման ծավալների ավելացումը, հայկական կազմակեր-

պությունների շահերի պաշտպանությունը, ինչպես նաև տվյալ երկրից դեպի Հայաստան ներդրումների աճը:

7 Պետության կողմից և միջոցներով կապահովվի արտահանման պոտենցիալ ունեցող ապրանքատեսակների սերտիֆիկացումը և գովազդը արտաքին շուկաներում:

8 Պետական-մասնավոր համագործակցությամբ, բնապահպանական ժամանակակից պայմանների ապահովմամբ, կկառուցվեն մետալուրգիական գործարաններ՝ հանքանյութից վերջնական արտադրանք թողարկելու նպատակով:

9 Կցուցաբերվի աջակցություն ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման ոլորտի ձեռնարկություններին՝ ինովացիոն ծրագրերի մշակման, արտադրական և իրացման ցանցերի ստեղծման, ինչպես նաև գիտական արդյունքները արտադրական ոլորտ փոխանցող ենթակառուցվածքներ ձևավորելու նպատակով:

10 Կվերագործարկվեն և կստեղծվեն խոշոր, կենցաղային և նուրբ օրգանական քիմիայի արդիական ձեռնարկություններ:

Փոքր և միջին գործարարության խթանում

11 Կգործադրվի հակամենաշնորհային օրենսդրություն, կվերացվեն շուկաներ ազատ մուտք գործելու արհեստական սահմանափակումները:

12 Կընդունվի գնագցման (դեմպինգային) օրենսդրություն, կստեղծվի հակագնագցման (հակադեմպինգային) միջգերատեսչական հանձնաժողով, որը կպաշտպանի տեղական արտադրողներին:

13 Կներդրվի առևտրական գործունեության (սուպերմարկետների և փոքր առևտրային օբյեկտների) հստակ կանոնակարգման համակարգ:

14 Երևան քաղաքից 30 կմ և ավելի հեռավորության վրա, 10-ից ոչ պակաս աշխատատեղով արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ձեռնարկություններ հիմնելու դեպքում, պետական բյուջեի միջոցների հաշվին, կապահովվի դրանց անհրաժեշտ ենթակառուցվածքների (էլեկտրամատակարարում, գազամատակարարում, ջրամատակարարում, ջրահեռացում և այլն) կառուցումը:

15 Փոքր և միջին ձեռնարկություններին այն ապրանքների արտադրության կազմակերպման նպատակով, որոնց ներմուծման ծավալները գերազանցում են հայրենական արտադրանքի ծավալները, կտրամադրվեն մինչև 50 մլն. դրամի չափով արտոնյալ վարկեր՝ ընդհուպ մինչև առաջին երկու տարվա վարկային տոկոսադրույքի ամբողջական սուբսիդավորում:

16 Էքսո և էկո տուրիզմի զարգացման նպատակով մարզերում կկազմակերպվեն ուսումնական դասընթացներ, կմատուցվի անհատույց խորհրդատվու-

թյուն, կստեղծվի փոքր հյուրանոցների ցանցում տեղերի ամրագրման բազմալեզու կայքէջ, կտրամադրվեն արտոնյալ վարկեր՝ ընդհուպ մինչև առաջին երկու տարվա վարկային տոկոսադրույքի ամբողջական սուբսիդավորում:

17 Գրանցված գյուտերի կիրառման, ինչպես նաև նորարարությունների, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպման համար փոքր և միջին ձեռնարկություններին կտրամադրվեն արտոնյալ վարկեր մինչև 50 մլն դրամի չափով՝ ընդհուպ մինչև առաջին երկու տարվա վարկային տոկոսադրույքի ամբողջական սուբսիդավորում:

18 Թեթև արդյունաբերության զարգացումը կդիտարկվի ներկրվող մի շարք ապրանքների արտադրությունը Հայաստանում կազմակերպելու, զբաղվածություն (հատկապես՝ կանանց շրջանում) ապահովելու, պետական պատվերի շրջանակներում աջակցություն ցուցաբերելու, օտարերկրյա կազմակերպությունների հետ հնարավոր համագործակցության մեխանիզմներ ձևավորելու տեսանկյունից:

19 Լիցենզավորման վարչաիրավական կարգը կփոխարինվի քաղաքացիաիրավականով՝ լիցենզիա տվող մարմինը պատասխանատվություն կկրի լիցենզավորվողի գործունեության արդյունքների համար:

20 Կբացառվեն քաղաքացիների և իրավաբանական անձանց համար մասնավոր կազմակերպություններից ծառայություններ գնելու և դրանց դիմաց պարտադիր վճարումներ կատարելու հակասահմանադրական պահանջները:

Գյուղատնտեսություն

21 Պետական աջակցությունը, ըստ տարածաշրջանների և անհրաժեշտության, կուղղվի գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործմանը, կարևոր պարենամթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացմանը, գոտիական մասնագիտացմանը, ձկնաբուծական, մեղվաբուծական, տեղական սերմնաբուծական և տոհմային տնտեսությունների, ինչպես նաև կոոպերացիաների զարգացմանը և անբարենպաստ բնակլիմայական գոտիներում գյուղատնտեսական արտադրության կազմակերպմանը:

22 Հողերի մշակման և տնտեսական շրջանառության մեջ ներգրավման աստիճանի բարձրացման նպատակով կվերանայվեն հողերի կադաստրային արժեքները, կխրախուսվեն դրանք մշակելուն ուղղված ծրագրերը՝ հատկապես սահմանամերձ, նախալեռնային և լեռնային տարածքներում:

23 Ամբողջությամբ կսուբսիդավորվեն գյուղացիական տնտեսությունների կողմից լիզինգային կարգով ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի վարկային տոկոսադրույքները:

24 Կձևավորվեն կարևոր պարենային մթերքների (հացահատիկ, կաթ, միս) նվազագույն շահավետ գնով երաշխավորված իրացման և ինտերվենցիոն համակարգեր:

25 Գյուղատնտեսական արտադրանք արտադրողներին, տարաժամկետ վճարման պայմանով կտրամադրվեն բարձր մթերատու հատկանիշներ ունեցող էլիտային սերմեր ու տոհմային անասուններ:

26 Սուբսիդավորման ընդհանուր ծավալը տարեկան կկազմի գյուղատնտեսության ոլորտի համախառն ներքին արդյունքի մինչև հինգ տոկոսը, իսկ ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր հեկտարի համար հատկացվող սուբսիդավորման գումարը կկազմի 60 հազար դրամ: Ընդհանուր առմամբ բյուջետային տարեկան աջակցությունը ժամանակաշրջանի ավարտին կհասցվի մինչ 60 մլրդ դրամի (այժմ չի գերազանցում 15 միլիարդը):

27 Խիստ հսկողություն կսահմանվի գյուղատնտեսության ոլորտում իրացվող վառելանյութերի, քսայուղերի և այլ նյութերի իրացման գների նկատմամբ: Կփոխհատուցվեն նշված նյութերի գների բարձրացման հետևանքով գյուղացիական տնտեսությունների կրած վնասները:

28 Օրենսդրորեն կկանոնակարգվեն տնամերձերի, այգեգործական տնտեսությունների (ամառանոցային հողամասերի), ինչպես նաև գյուղատնտեսական կոոպերատիվների իրավահարաբերությունները:

29 Շեշտակիորեն կմեղմվեն գյուղատնտեսական վարկերի տրամադրման պայմանները, կսուբսիդավորվեն վարկերի տոկոսադրույքները:

30 Կորստի նվազեցման և համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման շնորհիվ ոռոգման ջրի սակագինը կհասցվի 7 դրամի (այժմ 11 դրամ է):

Ենթակառուցվածքներ

31 Հեռանկարում ունենալով երկրում միասնական տրանսպորտային համակարգի ձևավորման խնդիրը՝ Երևանում կստեղծվի միասնական տրանսպորտային համակարգ, որը կներառի մետրոն, ավտոբուսներն ու տրոլեյբուսները՝ միասնական փոխադրման փաստաթղթերով, արտոնությունների և բազմասակագնային վճարման սխեմաներով, միասնական ֆինանսական համակարգով ու կառավարմամբ:

32 Օրենքով կամրագրվի, որ գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման և խմելու ջրի սակագները չեն բարձրանա առաջիկա 5 տարիներին, իսկ հետագա ցանկացած փոփոխություն կկապակցվի սպառողների եկամուտների հետ: Համալիր ուսումնասիրությամբ կբացահայտվեն ներմուծվող գազի ակնհայտ ցածր կալորիականության և որակի պատճառները, կներդրվի սակագնային թափանցիկ ու հիմնավորված հաշվարկների համակարգ՝ բացառելով ներմուծման և իրացման գների 100% տարբերությունը:

33 Լայնածավալ ներդրումներ կիրականացվեն միջհամայնքային, ներհամայնքային և միջպետական ճանապարհների կառուցման, ոռոգման և խմելու ջրի, ինչպես նաև գազաֆիկացման հասանելիության ապահովման համար:

34 Բեռնատար ավտոտրանսպորտային փոխադրումների զարգացման, հայկական բեռնափոխադրողների շարժակազմի արդիականացման ու մրցունակության ապահովման նպատակով ժամանակակից մեծ բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների ներմուծման համար կսահմանվի արտոնյալ մաքսային և հարկային ռեժիմ:

35 Ցամաքային շրջափակման մեջ գտնվող հանրապետությունում տուրիզմի զարգացման, մարդկանց մատչելի տեղաշարժի ապահովման նպատակով՝ կձեռնարկվեն ավիատոմսերի գների իջեցման համալիր միջոցառումներ:

Շարկաբյուջետային քաղաքականություն

36 Կվերանայվի եկամտահարկի սանդղակը, լայնորեն կկիրառվի պրոգրեսիվ հարկման համակարգը: Եկամտահարկով հարկումից կազատվի նվազագույն աշխատավարձը:

37 Մի շարք ոլորտներում (այդ թվում՝ հանքարդյունաբերություն) կկիրառվի գերշահույթի հարկման լիարժեք քաղաքականություն:

38 Կներդրվի ռեզիդենտների կողմից օտարերկրյա պետություններում կատարված տեղաբաշխումներից ստացված եկամուտների հայտարարագրման և հարկման համակարգ:

39 Կվերանայվի ներկրվող թեթև մարդատար ավտոմեքենաների մաքսազերծման նոր համակարգը՝ ապահովելով նոր, ժամանակակից, տնտեսող, էկոլոգիապես մաքուր մեքենաների մատչելիությունը և 3-5 տարվա ընթացքում երկրի շարժակազմի ամբողջական արդիականացումը:

40 Կվերանայվի գույքահարկի օրենսդրությունը, նոր համակարգը առավելագույնս կհամապատասխանեցվի ըստ արդարության գանձելու սկզբունքին, կսահմանվի շքեղության հարկ (պրոգրեսիվ գույքահարկով կհարկվի մեկ ընտանիքին 750 քառ. մետրից ավելի բնակտարածությունը):

41 Կուսումնասիրվեն տարածքներում արտադրական հզորությունների ծավալները և կքննարկվի չաշխատող, ոչ արդյունավետ ձեռնարկությունների նկատմամբ հարկային ռեժիմը փոփոխելու հարցը: Պետությունը ակտիվ դերակատարություն կստանձնի արտադրական հզորու-

թյունների առավել արդյունավետ օգտագործման և աշխատատեղերի ստեղծման գործում:

42 Կվերանայվի մաքսային օրենսգիրքը, մաքսադրույքներն ու մաքսային խթանները կդառնան գործիք՝ ակտիվ արդյունաբերական քաղաքականության, ինչպես նաև արտահանմանն ուղղված հայրենական արտադրության ծավալների ընդլայնման համար:

43 Առողջությանը վնաս հասցնող ապրանքների և ծառայությունների նկատմամբ կներդրվեն հանրային առողջապահական ոլորտի ֆինանսավորման նպատակային հարկեր:

44 Սոցիալական պաշտպանության, էկոլոգիայի և կրթության ոլորտների հավելյալ ֆինանսավորման նպատակով կկազմակերպվեն պետական վիճակախաղեր (օրինակ, հաշմանդամների համար «Կարմիր խաչ»)՝ սահմանափակ կարողություններով անձանց ներգրավելով վիճակախաղերի տոմսերի վաճառքի կազմակերպման աշխատանքներում:

45 Կներդրվի ծրագրային բյուջետավորման և պետական ու համայնքային եռամյա և հնգամյա բյուջեների ամբողջական համակարգ:

46 Ազգային ժողովի կողմից կընդունվի պետական բյուջեի մուտքերի հավաքագրման, ծախսերի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից ու միջազգային կազմակերպություններից ներգրավված միջոցների օգտագործման արդյունավետության վերահսկման օրենսդրություն:

Դրամավարկային քաղաքականություն

47 Ֆինանսական շուկայի միասնական կարգավորման իրավասությունը դուրս կբերվի Կենտրոնական բանկի վերահսկողության տիրույթից՝ տարանջատելով դրամավարկային քաղաքականության և ֆինանսական շուկայի կարգավորման գործառույթները:

48 Գնաճի թիրախ կսահմանվի միջին գնաճի ցուցանիշը, օրենքով կամրագրվի պատասխանատվություն Կենտրոնական բանկի և այլ մարմինների համար՝ գնաճի թիրախավորված ցուցանիշից 50% շեղվելու դեպքում:

49 Գնաճի թիրախների ապահովման համար կօգտագործվեն նաև մինչև մեկ տարվա ժամկետով բորսայական մեխանիզմներ:

50 Վարկային տոկոսադրույքները կլինեն 8-10 տոկոս միջակայքում, կվերանայվեն վարկային համակարգի տնտեսական նորմատիվները, կնվազեցվեն ներգրավված և տրամադրվող ֆինանսական միջոցների բանկային տոկոսադրույքների տարբերությունները, այլ պետություններից և միջազգային կազմակերպություններից ներգրավված նպատակային վարկային միջոցները առևտրային բանկերին և վարկային կազմակերպություններին կտրամադրվեն առանց հավելյալ տոկոսադրույքի: Կմեծանա վարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (հատկապես գյուղատնտեսության, արդյունաբերության և հիփոթեկային վարկավորման շուկայում):

51 Կթույլատրվի ապահովագրական ընկերություններին, համապատասխան ապահովագրության դասի լիցենզիայի պարագայում, իրականացնել նաև այդ դասի վերաապահովագրություն՝ կիրառելով Եվրամիությունում ընդունված չափորոշիչները և նպաստելով վերաապահովագրության ֆոնդերի զգալի մասի ներդրմանը Հայաստանի տնտեսությունում:

52 Կվերանայվի ԱՊՊԱ սակագների մեթոդաբանությունը, ինչը թույլ կտա սակագները նվազեցնել առնվազն 10 հազար դրամով:

53 Կիրականացվեն փոքր բաժնետերերի իրավունքների պաշտպանության օրենսդրական և իրավակիրառական բարեփոխումներ:

54 Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ԽՍՀՄ խնայբանկի ավանդներն ամբողջությամբ կհաշվառվեն, կիրականացվի դրանց վերհաշվարկ ռուբլի/դոլար/դրամ փոխարկմամբ, դրանք կինդեքսավորվեն նախընթաց ողջ ժամանակահատվածի համար: Ավանդային պարտավորությունները, ըստ տարեկան հատկացումների, ամբողջությամբ կկատարվեն՝ զուգակցվելով փոխհատուցման, ինչպես նաև հայրենական ապրանքերի (ծառայությունների) ձեռքբերման դիմաց որպես վճարման միջոց կիրառելու և տեղական արտադրությունը խրախուսելու ծրագրերի շրջանակներում:

Բնակարանային ապահովում

55 Կիրականացվի բնակարանային ապահովման ամբողջական ռազմավարություն՝ թիրախ սահմանելով յուրաքանչյուր տարի 5-6 հազար սոցիալական բնակարանների շինարարությունը:

56 Ռազմավարության ֆինանսավորման աղբյուրներ կհանդիսանան պետական միջոցները՝ 30-40 տոկոս, կորպորացիաների միջոցները՝ 10-20 տոկոս, քաղաքացիների միջոցները՝ 20-40 տոկոս, համայնքային միջոցները՝ 5-ից մինչև 20 տոկոս, բարեգործական միջոցները՝ մինչև 5 տոկոս:

57 Ըստ քաղաքացիների կարիքավորության ու եկամուտների աստիճանի, կգործադրվեն սոցիալական բնակարանի ամբողջական կամ համաֆինանսավորմամբ գնման կամ վարձակալության, ինչպես նաև հանրապետության համապատասխան տարածքներում տների կառուցման համար գույքային, հողային կամ նյութական աջակցության ծրագրեր:

Աշխատավարձ, սոցիալական պաշտպանություն, ժողովրդագրություն

58 Աղքատության շեմ կհամարվի կենսապահովման նվազագույն բյուջեի մեծությունը (2012թ. դրությամբ՝ 63.000 դրամ՝ ներկայիս 33.517 դրամի փոխարեն), կերաշխավորվի յուրաքանչյուր քաղաքացու դրանից ոչ ցածր եկամուտ ունենալու իրավունքը:

59 Կընդունվի երկրում աշխատավարձերի սահմանման միասնական ռազմավարություն, ինչը կապահովի աշխատանքի արտադրողականության աճ, միջին աշխատավարձերի տարբերակում՝ ըստ տնտեսության առաջնահերթությունների, մասնագիտությունների և աշխատանքային փորձառության: Կնվազեցվի եկամուտների և կենսամակարդակի տարբերությունը հասարակության աղքատ և հարուստ խավերի միջև:

60 Առաջնահերթության կարգով կբարձրացվեն ազգային անվտանգության, պաշտպանության, ոստիկանության, առողջապահության համակարգերի աշխատակիցների աշխատավարձերը: Այդ ոլորտների միջին աշխատավարձը կկազմի երկրում առկա միջին աշխատավարձի քառապատիկից ոչ պակաս (շուրջ 500.000 դրամ):

61 Հանրապետությունում նվազագույն ժամային աշխատավարձը կսահմանվի յուրաքանչյուր տարի՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի հետ միասին, տվյալ տարվա առաջին եռամսյակի միջին ժամային աշխատավարձի 50 տոկոսի չափով, սակայն ոչ պակաս կենսապահովման նվազագույն բյուջեից, որի աճը չպետք է պակաս լինի տարեկան գնաճի ցուցանիշից: Համակարգի լիարժեք ներդրման դեպքում նվազագույն ամսական աշխատավարձը 2013 թվականին կկազմի մոտ 63 հազար դրամ (այժմ 32.500 դրամ է), իսկ նվազագույն ժամային աշխատավարձը 40 ժամյա աշխատանքային շաբաթի դեպքում՝ մոտ 400 դրամ (այժմ 196 դրամ է), 36 ժամյա աշխատանքային շաբաթի դեպքում՝ մոտ 440 դրամ (այժմ 218 դրամ է), 24 ժամյա աշխատանքային շաբաթի դեպքում՝ մոտ 670 դրամ (այժմ 326 դրամ է):

62 Հանրային ծառայողների համար կսահմանվի աշխատավարձերի միասնական բազային դրույքաչափ՝ նվազագույն աշխատավարձի 120 տոկոսի չափով: Համակարգի լիարժեք ներդրման դեպքում քաղաքացիական ծառայության բազային աշխատավարձը կկազմի մոտ 76 հազար դրամ (այժմ քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձը 40.000 դրամ է):

63 Կընդլայնվի և 5 անգամ կմեծանա հանրային ծառայության սոցիալական փաթեթը՝ ներառելով առողջապահության, մշակույթի, կրթության և գիտության ոլորտի բոլոր աշխատակիցներին:

64 Կվերանայվի կենսաթոշակային բարեփոխումների համակարգը՝ ապահովելով արդարացի և սերունդների համերաշխությունը երաշխավորող կենսաթոշակների վճարում: Համակարգի լիարժեք ներդրման դեպքում միջին աշխատանքային կենսաթոշակը կկազմի մոտ 63 հազար դրամ (այժմ 31.255 դրամ է):

65 Կվերանայվի կենսաթոշակային տարիքի լրանալու կապակցությամբ աշխատանքից ազատելու պահանջը, մի շարք պետական ծառայություններում

(ոստիկանություն, քրեակատարողական, դատական ակտերի հարկադիր կատարման, ազգային անվտանգության ծառայություններ) թոշակավորման առավելագույն տարիքի ինստիտուտը:

66 Կփոխվի սահմանափակ կարողություններով անձանց նկատմամբ իրականացվող սոցիալական պաշտպանության քաղաքականությունը՝ հաշմանդամներին սոցիալական քաղաքականության օբյեկտից դարձնելով քաղաքականության սուբյեկտ: Կապահովվի այս անձանց աշխատունակության վերականգնումն ու եկամտաստեղծ գործունեության մեջ լիարժեք ներգրավումը: Նրանց համար կստեղծվի ինքնադրսևորման լիարժեք միջավայր:

67 Դրական փոփոխություն կարձանագրի տարեկան վերականգնվող (ներկայումս մոտ 1500) և առաջին անգամ հաշմանդամ ճանաչվող (մոտ 16.000) անձանց հարաբերակցությունը:

68 Սահմանափակ կարողություններ ունեցող հինգ և ավելի աշխատող ունեցող ձեռնարկություններին տվյալ անձանց համար վճարված եկամտահարկի գումարի հիսուն տոկոսի չափով կնվազեցվի շահութահարկի գումարը, իսկ եթե աշխատող հաշմանդամների թիվը աշխատավորական կոլեկտիվի 20 տոկոսը և ավելին է, բայց ոչ պակաս, քան 10 հոգի, ապա շահութահարկը կնվազեցվի կամ ձեռնարկությունը կսուբսիդավորվի հաշմանդամ աշխատողների եկամտի դիմաց վճարվող եկամտահարկի գումարի 100 տոկոսի չափով: Պետական ակտիվ մասնակցությամբ կվերականգնվեն խուլ ու համրերի ներգրավմամբ արտադրական միավորումները:

69 Կգործադրվի ժողովրդագրական ակտիվ քաղաքականություն՝ ուղղված ծնելիության մակարդակի բարձրացմանը, մահացության մակարդակի նվազեցմանը, կյանքի տևողության ավելացմանը, արտագաղթի կասեցմանն ու ներգաղթի խրախուսմանը: Արդյունքում՝ յուրաքանչյուր տարի բնակչության թվաքանակը կաճի միջինը 50.000-ով:

70 Կսահմանվի մինչև 7 տարեկան երեխաների ամենամսյա նպաստ՝ առաջին երեխայի դեպքում՝ 20.000 դրամ, երկրորդ երեխայի դեպքում՝ 25.000 դրամ, երրորդ երեխայի դեպքում՝ 40.000 դրամ, չորրորդ, հինգերորդ և հաջորդ երեխաների դեպքում՝ 60.000 դրամ: Հինգ և ավելի երեխա ունեցող ընտանիքներին անհատույց կտրամադրվի բնակարան:

71 Կընդունվի օրենք, որի համաձայն մինչև երկու տարեկան երեխա խնամող չաշխատող կանանց համար այդ ժամանակահատվածը կհամարվի աշխատանքային ընդհանուր ստաժ:

72 Նախադպրոցական ուսումնական հաստատությունները կդառնան անվճար ամբողջ երկրի տարածքում, իսկ այդ հաստատությունների աշխատակիցների աշխատավարձը կկազմի միջինը 110 հազար դրամ:

73 Կներդրվի աշխատողների և սպառողների (հատկապես սննդամթերքի և վառելիքի որակի ապահովման հարցում) իրավունքների լիարժեք պաշտպանության ամբողջական համակարգ:

74 Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում կխրախուսվեն հայկական ավանդական մարզաձևերն ու մասսայական սպորտը, կխթանվեն մարզադպրոցների և ակումբների աշխատանքները, կբարելավվեն մարզիչների սոցիալական պայմանները, օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին նախապատրաստվելու, հաջող մասնակցություն ապահովելու նպատակով՝ ազգային հավաքականի թիմերը կապահովվեն ժամանակակից պայմաններով:

Քաղաքաշինություն

75 Օրենքով կարգելվի թույլտվությունների տրամադրումը Երևանի կենտրոնում բնակարանային շինարարություն իրականացնելու համար: Բարեկարգման ենթակա տարածքները կվերակառուցվեն բացառապես հանրային տարածքների՝ այգիների, ջրավազանների և այլն:

76 Շինարարության բնականոն գործունեության ու զարգացման, ինչպես նաև շինանյութերի արտադրության ոլորտի աշխուժացում ապահովելու նպատակով կորդեգրվի գնողունակ պահանջարկով հիմնավորված բնակարանային շինարարություն՝ այն համակցելով սոցիալական բնակարանային ապահովման ռազմավարության հետ:

77 Մարզերի համաչափ զարգացման քաղաքականությունը կիրականացվի տարաբնակեցման հայեցակարգի հիման վրա՝ շինարարության հատվածի ռեսուրսները ուղղելով ենթակառուցվածքների զարգացմանը և ամբողջ տնտեսության համար աճի նոր աղբյուրների ձևավորմանը, արտադրական և բնակարանային շինարարական գործունեության ծավալմանը մարզերում:

Մարդու կայուն զարգացում

Շրջակա միջավայրի պաշտպանություն

78 Տնտեսական նախագծերը կիրականացվեն բացառապես շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության փորձաքննության և համապատասխան եզրակացության առկայության դեպքում, դրանց արդյունքները պետք է հասանելի լինեն հանրությանը:

79 Կներդրվի թափոնների և աղբի հետագա կուտակումները սահմանափակող ընթացակարգ: Նոր թափոնների կուտակում կարող է իրականացվել միայն առկա թափոնների և աղբի համապատասխան կառավարման մեխանիզմների գործադրման դեպքում (վերամշակում, վնասազերծում, մեկուսացում, արտահանում և այլն):

80 Կսահմանափակվի ժամանակակից էկոլոգիական նորմերին չհամապատասխանող տրանսպորտային միջոցների մուտքը Հայաստան: Կխրախուսվի էլեկտրատրանսպորտի գործունեությունը, կկառուցվեն մետրոյի նոր կայարաններ: Կսահմանափակվի բեռնատար մեքենաների երթևեկությունը Երևանի մեծ կենտրոնում:

81 Կարգելվի քաղաքացիների առողջությանը վնասող և սահմանված նորմերի (աղմուկի, փոշու, արտանետումների) խախտումով աշխատող կազմակերպությունների գործունեությունը:

82 Կվերականգնվեն, կընդլայնվեն կանաչ տարածքները և ջրային ավազանները, հանրային զբոսայգիների քանակը և մակերեսը՝ զերծ պահելով դրանք առևտրային շահագործումից:

Առողջապահություն

83 Աստիճանաբար կներդրվի առողջության պարտադիր ապահովագրության պետական-կորպորատիվ վճարումների համակարգ, ընդ որում՝ ապահովագրական վճարի չափը կպայմանավորվի քաղաքացիների եկամտի չափով՝ աղքատության շեմից ցածր գտնվող քաղաքացիների, երեխաների, թոշակառուների, սոցիալապես խոցելի խմբերի համար ապահովագրական վճարները ամբողջությամբ կֆինանսավորվեն պետական բյուջեից, միջին եկամուտ ունեցող քաղաքացիների ապահովագրական վճարի մի մասը կհատուցվի պետական միջոցների հաշվին, հասարակության ապահով հատվածը կվճարի ապահովագրական վճարն ամբողջությամբ: Մեկ անձի համար տարեկան առողջապահական ծախսը նվազագույնը կհասցվի 150.000 դրամի (այժմ չի գերազանցում 63.000 դրամը):

84 Արտոնություններ կտրամադրվեն մարզերում և հեռավոր բնակավայրերում աշխատող բուժանձնակազմի անդամներին:

85 Կներդրվեն դեղերի և առողջապահական ծառայությունների գների պետական կարգավորման մեխանիզմներ: Պետական վերահսկողություն և մասնակցություն կապահովվի դեղերի շուկայում:

86 Խստագույնս կվերահսկվի առողջապահական ծառայությունների մատուցման որակը ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում՝ ապահովելով համանման ծառայությունների մատուցում երկրի ցանկացած վայրում:

87 Պետական ֆինանսական հոսքերը հիմնականում կնպատակաուղղվեն դեպի պետական ենթակայության բուժհաստատություններ՝ կտրուկ բարելավելով վերջիններիս նյութատեխնիկական բազան:

Գիտություն, մշակույթ, կրթություն, երիտասարդություն

88 10 անգամ կաճի գիտության ոլորտի պետական ֆինանսավորումը՝ հասցնելով ՀՆԱ-ի 1-2%-ին: Ընդ որում՝ գիտության բնագավառի յուրաքանչյուր տարվա ծախսերը նվազագույնը կաճեն տվյալ տարվա պետական բյուջեի եկամուտների կանխատեսվող աճից ոչ ցածր:

89 Կկարևորվի մշակութային քաղաքականության դերը՝ որպես երկրում իրականացվող բարեփոխումների, բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացման և ժամանակակից մրցունակ պետության գրավական:

90 Կմշակվեն մշակութային անվտանգության եռամյա և հնգամյա ռազմավարական ծրագրեր՝ ուղղված ազգային մշակույթի պահպանմանն ու համամարդկային հոգևոր արժեքներին հաղորդակցմանը:

91 Յուրաքանչյուր տարի կավելանան մշակույթի ոլորտի բյուջետային ֆինանսավորումն ու ներդրումները, կընդլայնվի հայ մշակույթի միջազգային ընդգրկվածությունը:

92 Միջազգային բակալավրիատի դիպլոմային ծրագիրը կթարգմանվի և կներդրվի ՀՀ կրթական համակարգում:

93 Կստեղծվեն թվանշային տեխնոլոգիաների հայացման համապատասխան կարելիություններ,

94 Կհիմնվի Մշակութային հիմնադրամ՝ երիտասարդ տաղանդներին խրախուսելու, դեբյուտային ծրագրեր ֆինանսավորելու, արտերկրի մշակութային բարձրագույն հաստատություններում կրթությունը շարունակելու համար:

95 Կսահմանվեն հարկային արտոնություններ մշակույթի ոլորտում բարեգործությունը, ինչպես նաև գրական-գեղարվեստական գործունեությունը խթանելու նպատակով:

96 Հանրային հեռուստաընկերությունը կապահովվի ամբողջական և լիարժեք ֆինանսավորմամբ, կարգելվի գովազդը հանրային հեռուստաընկերության եթերում:

97 Գեղարվեստական կրթության և դաստիարակության ոլորտի մանկավարժների աշխատավարձերը կմոտեցվեն հանրակրթության ոլորտի մանկավարժների միջին աշխատավարձին:

98 Յուրաքանչյուր երիտասարդ կունենա որակյալ կրթություն ստանալու, ստեղծագործելու, աշխատելու, բիզնեսով զբաղվելու և ինքնադրսևորվելու լիարժեք հնարավորություն:

99 Ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերը, մասնագիտությունների բաշխումը կկապակցվի տնտեսության կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին: Մասնագիտական կողմնորոշման համակարգը լիարժեք կգործադրվի, որի պայմաններում յուրաքանչյուր երիտասարդ, օգտվելով այս համակարգից, կունենա անվճար մասնագիտական կրթության իրավունք և երաշխավորված աշխատանք:

100 Կապահովվի ուսման մատչելիությունը: Կվերանայվեն կրթավճարները, ուսումնական հաստատություններում ուսման վճարի չափը կկապակցվի շահառուների եկամուտների, ինչպես նաև տրամադրվող կրթության որակի և գիտելիքի հետ:

101 Ամբողջությամբ կգործադրվի պարտադիր զինվորական ծառայությունն անցած երիտասարդների՝ ուսումնական հաստատություններում անվճար սովորելու ծրագիրը:

102 Ուսանողները կապահովվեն հանրակացարանով:

103 Ուսանողներին կընձեռվի մետրոպոլիտենի ծառայություններից զեղչով օգտվելու հնարավորություն (ամսական աբոնեմենտի տրամադրում՝ փոխադրավարձի 50 տոկոսի հաշվարկով):

104 Ուսանողներին, ըստ առաջադիմության, կտրամադրվի կրթաթոշակ նվազագույն աշխատավարձի 50-100 տոկոսի չափով:

105 Երեխաներ ունեցող ուսանողները կազատվեն ուսման վճարից:

106 Սոցիալական բնակարանային ապահովման ռազմավարության շրջանակներում երիտասարդ նորաստեղծ ընտանիքները կունենան սոցիալական բնակարաններից օգտվելու առաջնահերթություն:

107 Երևանից 30 կմ հեռու գտնվող համայնքներում նորաստեղծ երիտասարդ ընտանիքներին տուն կառուցելու համար անհատույց կտրամադրվի հողատարածք և արտոնյալ վարկեր՝ առնվազն տասը տարի բնակություն հաստատելու պայմանով:

108 Կարգելվի տարիքային խտրականությունը և մինչև 25 տարեկան երիտասարդներին առաջին անգամ աշխատանքի ընդունվելու ժամանակ ներկայացվող աշխատանքային փորձի առկայության պահանջը:

109 Հանրային ծառայության այն պաշտոնների մրցույթներում, որտեղ աշխատանքային փորձ չի պահանջվում, նախապատվությունը կտրվի աշխատանքային փորձ չունեցող երիտասարդ մասնագետներին՝ երաշխավորելով գենդերային հավասարություն: Կվերանայվեն հանրային ծառայողների ուսուցման, նշանակման, խրախուսման ու պատասխանատվության ինստիտուտները՝ բացառելով որևէ կամայական դրսևորում, ապահովելով քաղաքականությունից լիակատար անկախություն:

110 Պետության կողմից իրականացվող երիտասարդական քաղաքականությունը, ինչպես նաև ուսումնական հաստատությունները կապակուսակցականացվեն: Կբացառվի պետական երիտասարդական քաղաքականությանն ուղղվող միջոցների խտրական օգտագործումը:

111 Կընդլայնվի մանկապատանեկան մարզական հաստատությունների ցանցը, զարկ կտրվի մասսայական ֆիզիկական կուլտուրային և սպորտին՝ որպես առողջ ապրելակերպի գրավական:

112 Կմեծացվեն սպորտի ֆինանսավորման ծավալները՝ պրոֆեսիոնալ սպորտի զարգացումը, միջազգային ասպարեզում հայ մարզիկների պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով:

Ազգային-ժողովրդավարական ժամանակակից պետության կառուցում

Կնախաձեռնվեն համակարգային, սահմանադրական և օրենսդրական բարեփոխումներ, որոնք ուղղված կլինեն.

113 Վերահսկման, հակակշռման և զսպման ժամանակակից ու թափանցիկ մեխանիզմներով օժտված խորհրդարանական կառավարման համակարգի ձևավորմանը, ԱԺ պատգամավորների թվի կրճատմանը, անձեռնմխելիության սահմանափակմանը, պատգամավորների ետկանչման հնարավորության ստեղծմանը:

114 Հայաստանի վարչատարածքային նոր բաժանմանն ու մարզպետների ընտրությանը, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդլայնմանը և աշխատատեղերի ստեղծման հարցում պարտավորությունների ամրագրմանը:

115 Դատական համակարգի իրական անկախությունը ապահովող դատավորների նյութական ապահովվածությանը, առաջադրման ու ազատման հակակշռող մեխանիզմների ամրագրմանը, դատարանների նախագահների ռոտացիոն կարգով ընտրությանը: Ընդ որում՝ Արդարադատության խորհրդի անդամ դատավորների լիազորությունները կկասեցվեն խորհրդի անդամության ողջ ժամանակահատվածում: Խորհրդի կազմում չեն ընդգրկվի այն իրավաբանագիտնականները, ովքեր ունեն մերձավոր ազգական դատավորներ: Միջազգային չափանիշներին համապատասխան կհամադրվի դատավորների ու դատախազների նյութական ապահովությունը: Կսահմանվի դատախազների և դատավորների պիտանելիության ցուցակներում ընդգրկվելու համար քննությունների թափանցիկ ընթացակարգ՝ բացառելով անհարկի միջամտությունները: Նաև կբացառվի 5 տարուց ավելի պիտանելիության ցուցակում անձի գտնվելը: Կսահմանվեն դատարան դիմելու պետական տուրքի այնպիսի չափեր, որոնք չեն խաթարի արդար դատաքննության և արդարադատության մատչելիության սկզբունքի լիարժեք գործադրումը:

116 Քրեական օրենսդրության փոփոխություններին, որոնք հատկապես կվերաբերեն հանցագործությունների համար սահմանված պատիժների համապատասխանեցմանը հանցագործության հանրային վտանգավորության աստիճանին, պատվիրված քննությունները բացառելուն, կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու դեպքերի նվազեցմանը, ազատազրկման հետ չկապված և պայմանական ազատազրկման պատժի կիրառման ամբողջական համակարգի գործադրմանը, քրեակատարողական հիմնարկների բեռ-

նաթափմանը, այսպես կոչված, «անկախ» հանձնաժողովների լուծարմանն ու եվրոպական բազմաթիվ երկրներում կիրառվող՝ անկախ փորձագետների եզրակացության հիման վրա պատժի կրումից ազատելու համակարգի ներդրմանը:

117 Վարչական պատասխանատվության վերաբերյալ նոր օրենսգրքի ընդունմանը, որը համահունչ կլինի անկախ պետականության և վարչական բնույթի զանցանքների պատասխանատվության պարզեցմանն ու համահարթեցմանը:

118 Քաղաքական և տնտեսական գործառույթների զուգակցումը բացառող, անձի չվարկաբեկվածության, անհրաժեշտ ունակության ու փորձառության հատկանիշների գերակայությունը երաշխավորող և հանրային ծառայողների բնականոն առաջխաղացումն ապահովող կադրային քաղաքականության ձևավորմանը:

119 ՁԼՄ-ների հանդեպ ոչ համաչափ տուգանքներ սահմանող դատական հայցերի կիրառման օրենսդրորեն բացառմանը:

120 Հասարակական վերահսկողությունն ու միջամտությունն ապահովող, արդյունավետ գործիքներով օժտված քաղաքացիական հասարակության կայացմանը:

121 Խոսքի ազատությանն ու բազմակարծության իրական երաշխավորմանը: ՀՌԱՀ և Հանրային հեռուստատեսության խորհուրդների ձևավորումը կիրականացվի քաղաքական հավասարակշռության ու գործունեության թափանցիկության ապահովման սկզբունքներով:

122 Հասարակական կարգուկանոնի ձևավորմանը, անպատժելիության ու հոռի բարքերի վերացմանը:

123 Ազգային հիմնախնդիրների լուծմանը հետամուտ, որակապես նոր տնտեսական, քաղաքական, հոգևորմշակութային էլիտայի ձևավորման հիմքերի ստեղծմանը:

124 Կարգելվի մասնավոր անձանց և կազմակերպությունների կարիքների համար քաղաքացիների սեփականության օտարումը գերակա հանրային շահի անվան տակ:

125 Հանրային ծառայությունների էթիկայի հանձնաժողովը կվերակազմավորվի ինքնուրույն և թափանցիկ գործող հակակոռուպցիոն գործակալության: Ֆինանսա-տնտեսական ոլորտում կատարվող ստուգումների արդյունքների քննարկումը կդառնա թափանցիկ, կբացառվի միջոցներ հափշտակած պաշտոնատար անձի հետագա պաշտոնավարումը:

126 Կձևավորվի քաղաքական ընդդիմության գործուն դերակատարությունն ապահովող իշխանություն-ընդդիմություն միասնական քաղաքական համակարգ: Մասնավորապես՝

- Կընդունվեն ընդդիմության և ընդդիմության կողմից վերահսկողության մասին օրենքները,
- Վերահսկիչ պալատի խորհրդում ընդդիմությանը կտրվի քվոտա, իսկ հակամենաշնորհային քաղաքականությունն իրականացնող մարմնի ղեկավարի, ինչպես նաև քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի պաշտոնները կվերապահվեն ընդդիմությանը,

127 Կսահմանվի 100% համամասնական ընտրակարգ, կձևավորվի ընտրական հանձնաժողովների անաչառությունն ապահովող ու պատասխանատվությունը հստակ հասցեավորող անկախ և ինքնուրույն գործող

ընտրական նոր կառույց: ԿԸՀ նախագահը կնշանակվի ԱԺ կողմից, իսկ ընտրություններին մասնակցությունը կսահմանվի որպես քաղաքացու պարտավորություն:

128 Կամրագրվեն քվեաթերթիկների կեղծումը, ապօրինի շրջանառությունը, կրկնական քվեարկությունը կանխող և քվեարկության մատյանների հասանելիությունն ապահովող գործուն մեխանիզմներ, իսկ համապատասխան մարմինների համար կսահմանվեն հատուկ լիազորություններ և պատասխանատվություն՝ ընտրակաշառքի կանխարգելման և բացահայտման համար:

Ազգային-պետական ուղեգծի հաստատմանն ուղղված քաղաքականություն

129 Ադրբեջանի հետ հակամարտությունը կարգավորելու հայեցակարգով կապահովվի, որ հայկական կողմերի (Հայաստան-Արցախ) փոխզիջումը չարձանագրի նահանջ Արցախի ժողովրդի 1991թ. Անկախության և 2006թ. ԼՂՀ Սահմանադրության ընդունման համաժողովրդական հանրաքվեներով արդեն իսկ արտահայտած կամքից և լինի համարժեք ու համաչափ Ադրբեջանի միաժամանակյա զիջումներին:

130 Կպահանջվի, որ Արցախը, լինելով հակամարտության հիմնական և ինքնուրույն կողմ, ճանաչվի և հանդիսանա իրավահավասար բանակցային կողմ, իսկ Հայաստանը կճանաչվի և կհանդիսանա ԼՂՀ անկախության և անվտանգության երաշխավոր: Հայաստանի և Արցախի միջև կկնքվի համաձայնագիր՝ ռազմավարական դաշինք ձևավորելու մասին, Ադրբեջանի հետ ուժի կիրառումը բացառող եռակողմ պայմանագիր ստորագրելու խնդիր կդրվի:

131 Արտաքին քաղաքականության օրակարգում կամրագրվի և կհետապնդվի ԼՂՀ միջազգային ճանաչման հարցը, իսկ Ադրբեջանի հետ բանակցությունները կշարունակվեն Արցախի կարգավիճակի և անվտանգության խնդիրների լուծման առաջնայնությունը ապահովելու նպատակադրումով:

132 Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը կիրականացվի ազգային անվտանգության ռազմավարությունը չխափանելու, մեր ժողովրդի լինելիությունն ու նրա նպատակների իրականացման հեռանկարը չվտանգելու պատասխանատվությամբ:

133 Կընդունվեն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման պետական քաղաքականության հիմնադրույթները և ցեղասպանության ուրացման համար քրեական պատասխանատվություն նախատեսող օրենքները:

134 Հայ-թուրքական ցյուրիխյան արձանագրություններից ետ կկանչվի հայկական կողմի ստորագրությունը:

135 Առանց նախապայմանների ցամաքային շրջափակման վերացումը և միջազգային իրավունքի ընդհանուր հիմունքներով դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կընդունվի որպես հարաբերությունների կարգավորման բնական մեկնակետ:

136 Հայաստանի արտաքին քաղաքականությունը անհրաժեշտ դիմակայություն կապահովի թուրք-ադրբեջանական տանդեմի հակահայկական ծրագրերին: Թուրքիայի կողմից ներկայացվող նախապայմանները կգնահատվեն որպես անօրինական և մեր ազգային արժանապատվությունը վիրավորող: Կբացառվի հայ-թուրքական հարաբերությունների և Ղարաբաղյան հակամարտության կարգավորման առկա գործընթացների փոխկապակցումը: Չի կնքվի որևէ պայմանագիր, որով կարող է ուժը կորցրած ճանաչվել կամ վերացվել ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի միջազգային իրավական նշանակությունը:

137 Մինչև բովանդակ հայ ժողովրդի անժամանցելի իրավունքների վերականգնումը, ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգի անքակտելի մասը կկազմեն Հայոց ցեղասպանության ճանաչման և փոխհատուցման հարցերը, կբացառվի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը թուլացնող որևէ գործողություն՝ չեզոքացնելով Ցեղասպանության ուրացման թուրքական քաղաքականության փորձերը:

138 Հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունների ամրությունն ու հետագա զարգացումը մեծապես կպայմանավորվի Վրաստանում (հատկապես հայաբնակ Ջավախքում) բնակվող մեր հայրենակիցների՝ որպես այդ երկրի լիարժեք քաղաքացիների անվտանգության, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների հարգմամբ և ապահովմամբ:

139 Նկատի ունենալով, որ Նախիջևանը բռնակցվել է Ադրբեջանին, անհրաժեշտ է մեր ժողովրդի հիշողության մեջ վառ պահել նրա հայկական պատկանելիության գիտակցությունը: Քաղաքական, իրավական և մշակութային հիմքեր նախապատրաստել Նախիջևանի հարցը միջազգային ատյաններում արծարծելու համար:

140 ՀՀ արտաքին քաղաքականության մեջ առաջնորդող սկզբունք կհամարվի այն, որ Հայոց պետականությունը ոչ միայն Հայաստանի քաղաքացիների, այլև համայն հայության ազգային նպատակների իրականացման երաշխավորն է: Ըստ այդմ՝ ամեն ինչ կարվի սփյուռքահայությանը հայոց պետականության գործընթացում լիարժեք ներգրավելու համար: Կգործադրվի Հանրապետության և հայության տարբեր հատվածների առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման, համազգային ներուժի բացահայտման և օգտագործման ամբողջական ռազմավարություն:

141 Կգործադրվեն հայրենադարձության և Արցախի վերաբնակեցման ամբողջական ծրագրեր:

142 Կգործադրվի Հայաստանի՝ որպես շրջափակված և դեպի ծով ելք չունեցող երկրի կարգավիճակից բխող համապարփակ ծրագիր:

143 Կմշակվի արտաքին քաղաքականության դոկտրին՝ հիմնված հայության անվտանգության և լինելիության, Հայաստանի անկախության և ինքնիշխանության ամրապնդման գերակայության վրա: Կներդրվի արտաքին քաղաքականության կարևորագույն հարցերը նախապես հանրաքվեի առարկա դարձնելու գործելակերպ:

144 Կարդիականացվեն զինատեսակները, ձեռք կբերվեն նոր միջին հեռավորության ճշգրիտ հրթիռներ: Կստեղծվեն հայրենիքին ծառայելու արժանավայել պայմաններ, կբարելավվի զինված ուժերում բարոյահոգեբանական մթնոլորտը, կբացառվեն արատավոր, ոչ կանոնագրային երևույթները:

145 Կտրուկ կընդլայնվեն ազատամարտիկների, ինչպես նաև զինծառայողների ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման համար մատուցվող ծառայության տեսակներն ու հատկացվող ֆինանսական միջոցները:

146 Հայաստանի քաղաքացիները հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս կգտնվեն պետության լիարժեք պաշտպանության ներքո:

ՄԵՆՔ ՔՈ ԸՆԿԵՐՆ ԵՆՔ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը
կազմակերպված է, ունի կամք և վճռականություն՝
առաջնորդելու մեր ժողովրդի երթը դեպի
Նոր Հայաստան, Ազատ, Արդար և Բարեկեցիկ հասարակություն:
Մենք հավատում ենք
Արդար երկրի և Ազատ քաղաքացու
ստեղծագործ ներուժին:

Սա է Հզոր Հայաստան կերտելու,
հպարտ քաղաքացի ունենալու գրավականը:

Մենք վճռական ենք:
Մեզ անհրաժեշտ է Ձեր քվեն ու վստահությունը:

ՄԵՐ ՇՈՒՆՉԸ ԲԱՑ Է

Երաժշտությունը՝ **Գիսանե Պալյան**
Կատարումը՝ Empyray Rock խումբ և **Սարգիս Մանուկյան**

Մենք դուրս ենք գալիս ինից այս խոր
Եւ չենք ցանկանում էլ դիմանալ,
Մենք ազատ մարդիկ և ուժ ենք նոր,
Որ պատրաստ է և ընդդիմանալ:

Հպարտ, անկաբկանդ, մենք՝ մեր հույսին,
Վախը, ֆծնանքը վանած մի կողմ,
Հայացքը բարձր, աչքը՝ լույսի,
Դեմ ենք մենք չարին, բարուն ենք կողմ:

Մեր շունչը բաց է՝ Ազատություն,
Կամքը հաստատ է՝ Արդարություն,
Եղիր ընկեր մեզ, Դաշնակցություն,
Որ մեր երկիրը Երկիր դառնա:

Որ մեր անունը մնա մաքուր,
Որ երեխան մեր քայլի ուղիղ,
Որ մեր երգը այս՝ լույսի ակունք,
Մեր վաղվա կյանքում բացի ուղի:

Մաղձը և թույնը թող մեզ լքեն,
Որ բաց ուրտերով հպվենք իրար,
Որ մի առավոտ հպարտ երգենք՝
Կամքը մեր ազատ կիսխի միայն:

Մեր շունչը բաց է՝ Ազատություն,
Կամքը հաստատ է՝ Արդարություն,
Եղիր ընկեր մեզ, Դաշնակցություն,
Որ մեր երկիրը Երկիր դառնա:

ՀԱՂԹԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Երաժշտությունը՝ **Վահան Արծրունի**
Կատարումը՝ **Գևորգ Հակոբյան**

Սա մեր երկիրն է, սա տունն է մեր,
Որ չեն պահելու պատիվն ունենք,
Քույր-ծնող-զավակ-եղբայր-ընկեր,
Ձիգ, ամուր մնանք իբրեւ սյուներ:

Ինքներս միայն մեզ աղավեն՝
Մեր ուժն ու կամքը իրար խառնած՝
Լույսերով, հույսով լցվենք հավեն,
Որ մեր երկիրը Երկիր դառնա:

Ազատությունը հաց է ու ջուր,
Արդարությունը աղն է կյանքի,
Դաշակցությունը չի նահանջում՝
Նա քո ընկերն է, միշտ քո կողքին:

Սա մեր երկիրն է՝ սար է ու գյուղ,
Մեր դժվար հողն է, ում չենք լքում,
Սա Երևանն է՝ սիրո աղբյուր,
Ճակատագիրն է մեր միշտ արթուն:

Մենք պարտավոր ենք ու մենք կանենք,
Քույր-ծնող-զավակ-եղբայր-ընկեր,
Մեր ու ձեռք իրար կըերկարենք,
Որ Հայաստանը լինի միշտ վեր:

Ազատությունը հաց է ու ջուր,
Արդարությունը աղն է կյանքի,
Դաշնակցությունը չի նահանջում՝
Նա քո ընկերն է, միշտ քո կողքին: